էր նրա սիրուն գլուխը: Նա աւելի կանացի դէմք ունէր, բայց գունաթափ, թախծալի դէմք: Գուցէ հայրենի աշխարհի տպաւորութիւնները խլեցին նրա երեսի գոյնը: Լուռ էր նա, չէր խօսում: Ինձ թւում էր, թէ նրան տիրում էր մի տեսակ ապշութիւն, մի տեսակ ինքնամոռացութիւն: Եթէ իր երկար կօշիկների խթաններով երբեմն մեքենաբար չխթէր իր ձիու կողքը, նրա ձին կը կանգնէր, որովհետեւ սանձը թուլացել էր նրա ձեռքում, իսկ մտրակը ընկել էր ձեռքից: Խե՜ղճ տղայ, ինչեր էին անցնում նրա սրտից. ինչ բանի վրայ էր մտածում նա: Ասլանը խոստացաւ ասել ինձ, թէ ո՞վ էր նա, եւ այդ հետաքրքրութիւնը տանջում էր ինձ:

Մենք անցանք Հացիկ գիւղը, որ այժմ կոչւում է Խաս-գիւղ: Նա դարձաւ դէպի ինձ այդ խօսքերով.

— Մեր պատմաբաններից մէկը, Փաւստոսը, այդ գիւղի չորրորդ դարու բնակիչներին «կարճազատքէ ածականը տոեց, որ նշանակում է կարիճների զաւակներ: Մեր այժմեան լեզւում կարճազատը չարաճճի բառի իմաստն ունի: Հին դարերում Հացիկի բնակիչները յայտնի էին իրանց անբարոյական բարք ու վարքով, մանաւանդ կանայք: Մեր Յուսիկ կաթողիկոսի որդի Պապը մի հարճ ունէր, որը այդ գիւղիցն էր: Այն օրից անցել է տասնեւոեց դար, բայց Հացիկի բնակիչները դեռ իրանց վարք ու բարքը չեն փոխել: Այսոամենայնիւ, Հացիկը անմոռանալի կը մնայ ամէն մի հայի համար, որովհետեւ նա Մեսրոպի ծննդավայրն է:

Երբ գիւղից դուրս եկանք, հեռուից նկատեցինք, որ մեր առջեւով գնում էին երկու ձիաւորներ: Ինչպէս երեւում էր, նրանք այդ գիւղումն էին իջեւանել, որովհետեւ մի քանի գիւղացիներ նրանց ճանապարհ էին դնում: Տեսնում էինք, թէ ինչպէս գիւղացիները մօտեցան երկու ձիաւորներից մէկին, նրա աջը համբուրեցին եւ, օրհնութիւնը առնելով, վերադարձան դէպի իրանց տները: Արդէն յայտնի էր, որ նա պէտք է հոգեւորական լինէր:

Երկար մենք եւ նրանք, միեւնոյն հեռաւորութեան վրայ, գնում էինք միեւնոյն ճանապարհով: Յետոյ կատեցինք, որ նրանք սկսեցին իրանց ձիաները կամաց քշել, որ մենք հասնենք:

Մեր ենթադրութիւնը ուղիղ դուրս եկաւ. երկու ձիաւորներից մէկը հոգեւորական էր, բայց եւրոպացի հոգեւորական: Իսկ միւսը, ինչպէս երեւում էր, կամ նրա ծառան պէտք է լինէր, կամ առաջնորդը: Ես առաջին անգամ տեսնում էի մի եւրոպացի կրօնաւոր: Նա քառասուն տարեկան հազիւ կը լինէր, բայց սեւ մօրուքը արդէն սկսել էր ճերմակիլ: Դէմքը ինձ շատ դուր եկաւ, մի ուրախ, մշտածիծաղ դէմք, որ, կարծես, ասում լինէր. «ես վաղուց ձեզ հետ բարեկամ եմ»: Գլխին դրած ունէր լայնեզրեայ փափուկ գլխարկ սեւ գոյնով